

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ  
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՐԱՄԱՆ  
/13.03.2003թ., N 144-Ն /**

"Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի չորրորդ կետին եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1123 որոշմամբ հաստատված "Գիտական եւ գիտատեխնիկական պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման կարգին" համապատասխան

**ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ**

1. Հաստատել "Գիտական եւ գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի համալիր նախագծերի ներկայացման կարգ"-ը:

2. Նախարարության գիտության եւ գիտամանկավարժական կադրերի պատրաստման վարչությանը (պետ՝ Ա. Քոսյան)՝ սույն կարգը 3-օրյա ժամկետում գրանցման ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ պարոն Ա. Ավետիսյանին:

*"Հաստատում եմ"*  
*Հայաստանի Հանրապետության*  
*կրթության եւ գիտության նախարար*  
*- ----- Լ. ՄԿՐՏՉՅԱՆ*  
*2003 թվականի մարտի 13-ին*

**ԿԱՐԳ**

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ  
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ**

1. "Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետին, Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության կանոնադրության 4-րդ կետի "գ" եւ 5-րդ կետի "գ" ենթակետերին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի N 1123 որոշմամբ հաստատված "Գիտական եւ գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման կարգին" համապատասխան սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների եւ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետեւ՝ պատասխանատու մարմիններ) կողմից կարգավորվող ոլորտներում գիտության եւ տեխնիկայի բնագավառին առնչվող նպատակային ծրագրերի համալիր նախագծերի (այսուհետեւ՝ ծրագրերի նախագծեր) Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարություն (այսուհետեւ՝ նախարարություն) ներկայացման կարգը:

2. Ծրագրերի նախագծերը պատասխանատու մարմինները նախարարություն են ներկայացնում նախարարության հրավերով սահմանված ժամկետում:

3. Ծրագրերի նախագծերը պետք է պարունակեն տեղեկություններ.

ա) նպատակների եւ խնդիրների,

բ) արդիականության,

գ) ծավալների եւ դրանց իրականացման ժամկետների,

դ) ակնկալվող արդյունքների,

ե) ավարտական ձեռքի վերաբերյալ,

զ) ունենալ կից նախահաշիվներ:

Ծրագրերի նախագծերում պետք է առանձնացվեն փուլեր՝ նշելով դրանց իրականացման ժամկետները եւ առաջադրանքները, տեխնիկատնտեսական ցուցանիշները եւ ֆինանսավորման ծավալները՝ համապատասխան հաշվարկներով ու հիմնավորումներով:

4. Նախարարությունը ծրագրերի նախագծերը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում համակարգում է դրանք եւ տրամադրում համապատասխան մասնագիտական փորձագիտական խորհուրդներին, որոնք գործում են համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարի 20.11.01 թ. N 522-Մ հրամանով հաստատված "Մասնագիտական փորձագիտական խորհուրդների ձեւավորման կարգի":

5. Մասնագիտական փորձագիտական խորհուրդները 10-օրյա ժամկետում իրականացնում են նախագծերի փորձաքննությունը:

6. Գիտական եւ գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի նախագծերը քննարկելու նպատակով նախարարությունը ստեղծում է հանձնաժողով, որի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարը (նախագահ), նախարարի տեղակալը, ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտն ու համապատասխան նախարարների տեղակալները, նախարարության գիտության եւ գիտամանկավարժական կադրերի պատրաստման վարչության պետը (քարտուղար):

7. Գիտական եզրակացություն ստացած նախագծերը նախարարության կողմից հինգօրյա ժամկետում ամփոփվում են եւ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության հետ սահմանված կարգով ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարություն: